



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵՑ

Ե . ՏԱՐԻ, ԹԻՒ 18 .

1847

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ա Ռ Ա Կ

Եւ Վրտակ :

Ո՛վ վրտակ վրտակ,
 Ս'ի այդպէս փուլթով
 Բնթանար 'ի ծով .
 Կ'աց 'ի քոյդ յատակ :

Եւ յ ալիք վրձիտ
 Օ երկիր առողքեն,
 Քեզ ահարկու չեն
 Վէճք և խորափիտ :

Եւ յ քոյին վիժակ
 Սօտ յաղբերակունս
 Յունկն ամենեցունց
 Քաղցր է ուխտորժակ :

Ո՛վ վրտակ վրտակ,
 Ս'ի այդպէս փուլթով
 Բնթանար 'ի ծով .
 Կ'աց 'ի քոյդ յատակ :

Թէ գետք ուղխաջուր
 Օ քեզ 'ի ծոց առնուն,
 Կապտեն և զանուն
 Եւ զփայլդ երկնատուր :

Ի բանտ ու'ի կապանս
 Բնդ նոսին ճըզիս ,

Եւ կամ գեղանիս
 Յօտարին վրնաս :

Ո՛վ վրտակ վրտակ,
 Ս'ի այդպէս փուլթով
 Բնթանար 'ի ծով .
 Կ'աց 'ի քոյդ յատակ :

Եւ քեզ են իմ բանք
 Որ նրմանագոյն
 Օ առուին կարկաջուն
 Իերես զօրինակ .

Եւ թէ տարադէմ
 Վ ազիցես յանկարծ
 Քան զոճ քոյին հարց ,
 Եւ առ քեզ ասեմ .

Ո՛վ ժիր պատանեակ,
 Ս'ի այդպէս փուլթով
 Բնթանար 'ի ծով .
 Կ'աց 'ի քոյդ յատակ :

Խորհորտէ Պանջ :

Տես մը մէջ կատու մը կար
 Անանկ կատողած՝ անանկ չար ,
 Որ խեղճ մըկանց անդադար
 Անտանելի շարդ կուտար .
 Ծակէն ելլողը կատուին ճանկը կ'իյնար ,
 Ծակէն չելէր՝ քաղցէն իր հոգին կ'ելար :
 Տեսան մըկներն որ բաներնին խիստ գէշ է ,
 Աս կատու չէ ըսին՝ մեզի պատիժ է .
 Ասանկ չըլար , եկէք խորհուրդ մը ընենք ,
 Ասոր մէկ ճարը տեսնենք .
 Ժողովնք նայինք ուր պիտ' երթայ վերջերնիս ,
 Ընելքնիս մէյր խորհինք մէջերնիս :
 Ասեն գրին , խորունկ ծակ մը ժողվեցան ,
 Տրտում տրտուր հոն խորհուրդի նըստեցան ,
 Ասանկ ասանկ է բաներնիս բարեկամք ,
 Դուք է՛նչ կ'ըսէք , ասոր է՛նչ ճար կը գըտնաք :
 Անգիէն ծեր խոհեմ մուկ մը ձայն հանեց ,
 Ես կ'ըսեմ թէ ըսաւ , քիչ մը մրտածեց ,
 Ես կ'ըսեմ թէ աս բանիս մէկ ճար մը կայ .
 Ան որ ընենք՝ ալ մեզ կատուէն վախ չըկայ .
 Ժամ մը առաջ պէտք է որ մենք սիրտ ընենք ,
 Անրգգամին վըզէն բոժոժ մը կախենք .
 Ան բոժոժին ձայնէն հարկաւ կ'իմանանք
 Անոր գայն ու մէկէն ծակ մը կը մրանանք :
 Բոլոր ժողովքն հաւնեցաւ աս խորհուրդին ,
 Մեծ ու պըզտիկ արմըննալով ծափ զարկին :
 Մընաց որ մէկն երթայ բոժոժը կախէ .
 Ի՛նչ գըժար բան . որ մուկն ասոր սիրտ ընէ :
 Մէկն ըսաւ թէ ափսոս որ ես հիւանդ եմ ,
 Մէկալը թէ՛ ես ալ այնչափ ճարպիկ չեմ ,
 Մէկը՝ ծեր եմ , մէկը՝ ես տըղոց տէր եմ .
 Մէկն ալ թէ ես սիրով ատ բանը կ'ընեմ ,
 Թող մէկը բըռնէ կատուն ,
 Բոժոժը ես կը կախեմ :
 Մըկներն աս որ լըսեցին ,
 Լաւ մը վըբան խընտացին ,
 Իրենք ալ խաղք խայտառակ
 Փախան մըտան ծակերնին :

Ասանկ ժողովքներ
 Որչափ ես տեսեր ,
 Որ մեծ խորհուրդներ
 Պարապ են ելեր :
 Ինչո՞ւ ըսես նէ՛
 Լաւ մըտիկ ըրէ .
 Կախ շատ արկարներ
 Իրենց ուժէն վեր
 Խորհուրդներ կ'ընեն .
 Ի՛նչպէս կատարեն :
 Երկրորդ , շատը կայ
 Որ խորհուրդ կուտայ ,
 Գործեղու որ գայ
 Սուտ հիւանդ կըլլայ .
 Երրորդ , կան ոմանք
 Որ է՛նչ աշխատանք
 Դընես դիմացնին՝
 Կառնեն վըբանին .
 Բայց արդէօք է՛նչպէս , —
 Ետքի մըկան պէս :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղեորութեան կրթութեան (Նախարարեայ) Եւ
 լարա , գրեալ Գիտաւնութեամբ 'ի Յ . Յ .
 ՊԱՐԹԵԼԸՄԵԱՅ , Խ Լարգճանեալ 'ի
 Հ . ԵՂՈՒԱՐԴԱՅ Վ . ՀԻՒՄԻՒԶԵԱՆ
 'ի Սիւնարեան Ուխտէն :

Պարթեւ կան որ Եւրոպայի մէջ ա-
 մէն ուսումնական և ուսումնասէր
 մարդկանց ծանօթ և յարգի և սիրե-
 լի են . ուստի զարմանք չէ որ մեր ազ-
 գակից եղբայրներէն ալ անոնք որ եւ-
 րոպական ուսումնասիրութեան ճա-
 շակը առեր են՝ ճանչնան , յարգեն ու
 սիրեն նոյն գրքերը : Լայսպիսի գրքե-
 րէն մէկն է նաև Պարթելըմի գաղ-
 ղիացոյն՝ Ուղեորութեան կրթութեան (Ն-
 ախարարեայ) Եւլարա ըսուած գործքը ,
 որուն հայերէն թարգմանութիւնը
 վեց հատորի մէջ ամփոփուած 'ի լոյս
 ընծայեցաւ :

Իրաւ , խիստ շատոր չէն դեռ մեր
 ազգին մէջ աս գրքիս ալ յարգը ինչ-
 պէս որ պէտք է ճանչցողները . բայց
 այն սակաւութիւ ճանչցողներուն ալ
 փափաքը մեծ էր որ տեսնեն մեր հի-
 մակուան ազգային մատենագրութիւ-
 նը այսպիսի գանձով մը հարըստա-
 ցած . և ահա անոնց փափաքն ալ կա-
 տարուեցաւ :

Եւ գրքիս հեղինակը իր ժամանա-
 կակցացը մէջ ասով հուշակուեր է .
 ան ատենի իմաստնոց կարգը աս գը-
 րուածքովը անցեր է , և ինչուան աշ-
 խարհիս վերջը իրեն անմահ յիշա-
 տակ աս գործքը թողեր է : Թող ու-
 ըմն մեր ժամանակակից եղբարքն
 ալ սիրով ընդունին ասոր հայերէն
 թարգմանութիւնը , և գիտնան որ
 մեզմէ ետքը եկող մեր ազգակիցները
 իրաւացի զարմացմամբ պիտի գովեն
 մեր ժամանակի ուսումնասիրութիւ-
 նը՝ որով այսպիսի գրքի մը հայերէն